

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N«ՀՀ ԼՄՎՔ ԳԿԾՁԲ-21/29»

ք. Վանաձոր

«26» 02 2021թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան -ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄԵՆ ՄԻԻԹԱՐՅԱՆ ԺՈՐԱՅԻ»ԱԶ -ն, ի դեմս Արմեն Մխիթարյան-ի, որը գործում է ինքնուրույն իր անունից (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Վանաձոր քաղաքի սպորտային միջոցառումների կազմակերպման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4¹⁷

¹⁷ Հանվում է պայմանագրից, եթե մարդկային ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կազմակերպման համար անհրաժեշտ նախազգային փաստաթղթերի քաղաքացիական փորձաքննության իրականացմանը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7831000 (յոթ միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ:¹⁸

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1¹⁹

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:²⁰

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

¹⁸ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

¹⁹ Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելից պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

²⁰ Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավերումներին, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրան նման պարտավորությունների վճարման կամ ոչ պարզաձև կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂՁԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 ²³

7.7 ²⁴

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե

²³Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

²⁴Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

²⁵Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարվել գործունեության (կրեստրոջինի) պայմանագիր կնքելու միջոցով:

ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15²⁵

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232514027
ՀՎՀՀ 06901936



Մ. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
Արմեն Մխիթարյան Ժորայի
Անհատ ձեռնարկատեր
ք. Վանաձոր, Չերնիշևսկի 1 նրբ. 8 տուն
ՎՏԲ-Հայաստան Բանկ
ՀՀ 16036041497500
ՀՎՀՀ 80134995

Ա. Մխիթարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

²⁵ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ցրտանապատիվը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ րոմանցի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության				մատուցման	
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	92621110/1	Վանաձոր քաղաքի սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ տես ներքևում	դրամ	7831000	1	Ըստ պահանջի	Պայմանագրի կնքման պահիս 25.12.2021թ.

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փոխյալ փարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Նմանատիպ են համարվում սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցած լինելը:

Վանաձոր քաղաքի սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների համար անհրաժեշտ են		
Տեխնիկական միջոցը	Պահանջվող ցուցանիշը	Պահանջվող քանակը
ավտոաշտարակ	սլաքի երկ.-ը՝ ոչ պակաս 15մ	1 հատ
միկրոբեռնատար	Ֆորդ, Գազել կամ համարժեք, ոչ պակաս 500կգ բեռնատարողությամբ	1 հատ
ավտոբուս	ՊԱԶ կամ համարժեք, 24 տեղանոց	10 հատ
միկրոավտոբուս	Ֆորդ, Գազել կամ համարժեք, 12-14 տեղանոց	20 հատ
ձյուն մաքրող մեքենա	անիվային ընթացքով, 120-130 ձիաուժ	1 հատ
ձայնային ապարատուրա /խոսափող, ուժեղացուցիչներ/	1 կիլովատ և ավելի հզորության	3 հատ

«ԼՈՒՎԱ 2ՄԵՌ-2021» 50-ՐԴ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՏՈՆԱՀԱՆԴԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Լրատվական միջոցներով տեղեկացնել քաղաքի ազգաբնակչությանը մարզատոնահանդեսի անցկացման մասին՝ փակցնելով ազդագրեր, լոգունգներ:
2. Ստեղծել հանձնաժողով համայնքի ղեկավարի նախագահությամբ, ընդգրկել տեղակալներ և անդամներ:
3. Բոլոր մարզածներից մրցումներն անցկացնելու համար նշանակել մրցավարներ:
4. Ապահովել ավտոաշտարակով /1 հատ, 2օր/ քաղաքում լոգունգներ փակցնելու և հանելու համար:

5. Ապահովել ձյուն մաքրող մեքենայով՝ 2 օր շուտ մարզատոնահանդեսի հարակից տարածքները և ճանապարհները նախապատրաստելու համար:
6. Ապահովել բանվորով /8 մարդ՝ 3 օր/, Թեժ լեռան հովիտը դրոշներով, լոզունգներով և փուչիկներով ձևավորելու և զարդարելու համար :
7. Տրամադրել ավտոբուս /10 հաստ/, միկրոավտոբուս /20 հաստ/, որոնք բնակչությանն անվճար կտեղափոխեն Թեժ լեռան հովիտ և հովտից քաղաք (յուրաքանչյուրը 4 երթ), խիստ հսկողություն սահմանել նրանց աշխատանքին:
8. Տրամադրել միկրոբեռնատար /2 օր, 4 երթ/ անհրաժեշտ գույքը և սննդամթերքը Թեժ լեռան հովիտ տեղափոխելու համար:
9. Ձեռք բերել ազդագիր՝ գունավոր, A3 ֆորմատի <<Լոռվա-ձմեռ>> մարզատոնահանդեսի ծրագրով /100 հաստ/, հրավիրատոմս՝ գունավոր մարզատոնահանդեսի նախշանկարներով /50 հաստ/, պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /60 հաստ/, շնորհակալագիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /50 հաստ/:
10. Ձեռք բերել կտորե փոքր դրոշների շարան /300 մետր/, մեծ դրոշների շարան՝ 0.6x0,8մ չափի /200 մետր/:
11. Ձեռք բերել պոլիէթիլենե գունավոր լոզունգ 0.7x3մ չափի /3 հաստ/ միակողմանի տպագրությամբ:
12. Ձեռք բերել պոլիէթիլենե գունավոր լոզունգ 0.7x8մ չափի /1 հաստ/ երկկողմանի տպագրությամբ՝ քաղաքում գովազդելու համար:
13. Ձեռք բերել պոլիէթիլենե «Լոռվա ձմեռ» լոզո 3x6մ չափի /1 հաստ/:
14. Գովազդի տեղաբաշխում համայնքի տարածքում ՍԹ ֆորմատի ռոլերային վահանակներով /1,2մ x 1,8մ չափի 2հաստ / երկկողմանի և բիքբորդերների միջոցով /3մ x 6 մ չափի, 3 հաստ/ տպագրություն, դիզայն:
15. Ապահովել ռաֆթինգով /փչովի սահնակ/:
16. Ապահովել ձնագնացով /բուրան, 2 հաստ/
17. Հրավիրել մուլտիբեռններ /5 մարդ , 3 ժամ /:
18. Ձեռք բերել փուչիկների փունջ <<Լոռվա ձմեռ-50>> գրությամբ՝ օդ բարձրացնելու համար/ 1 փունջ/, փուչիկ /100 հաստ/:
19. Ձեռք բերել մանկական փափուկ խաղալիք /20 հաստ/, հուշանվեր վետերանների համար /10 հաստ/, գավաթ մետաղյա /25 հաստ/՝ ըստ մարզաձևերի հաղթողներին պարգևատրելու համար:
20. Ձեռք բերել մանկական փափուկ խաղալիք ամենավոքր մասնակիցների համար /2 հաստ/:
21. Ձեռք բերել բջջային հեռախոս՝ հատուկ մրցանակի համար /2 հաստ/:
22. Ձեռք բերել պարկ՝ 0.7x 1.2 մ չափի քաթանե կտորից /2 հաստ/:
23. Ձեռք բերել խարույկի փայտ /2մ³/, վառելանյութ բենզին՝ գեներատորի համար, ռեգուլյար արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91 /50 լիտր/, դիզ. վառելիք՝ ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, խտությունը 150 C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ³ /20 լիտր/, հեղուկ գազ /15կգ/:
24. Ձեռք բերել շինարարական մեխ՝ 60մմ-ից 120մմ չափսերի /2.0 կգ/, ձողափայտ 80սմ երկար.5սմ տրամագծով /50 հաստ/, պարան սինթետիկ /300մ/, պարան սինթետիկ 8 մետրանոց /10կապ/, մուրճ

- շինարարական /2 հատ/, կանգնակ՝ 3մ բարձրությամբ փայտե հենակով Լոռվա ձմեռի լոգոյի համար /2 հատ/, ջահ՝ երկաթե կոնստրուկցիայով, թիթեղյա թաս 0.8մ տրամագծով, 1.80 սմ բարձրության /1 հատ/:
25. Ձեռք բերել ցուցանակներ՝ 1,5մ բարձր. ,փայտե, 30x80սմ չափի ԴՎՊ նյութից՝ մարզաձևերի անվանմամբ /16 հատ/:
26. Ձեռք բերել մուլտիերոսների դեկորացիաներ /3 հատ/:
27. Ձեռք բերել սուփնձ՝ չոր, գրասենյակային թուղթ սոսնձելու համար /10 հատ/, սկոչ /20 հատ/, գրիչ՝ գնդիկավոր /20 հատ/, տետր 12 թերթանոց /20 հատ/:
28. Ձեռք բերել շախմատի կոմպլեկտ պատրաստված ռետինե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան, պլաստմասե հումքից շախմատի քարեր, 2 գույնի (16-ական հատ) /8 հատ/:
29. Ձեռք բերել թեյ միանգամյա օգտագործման՝ միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված 2, 2,5 և 3գ փաթեթներով /35 տուփ/, սուրճ՝ բնական բոված, դարչնագույն փոշի, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տոխպ և այլն/1.0կգ/, շաքարավազ՝ սպիտակ գույնի, սրուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի /15 կգ/, կոնֆետ կարամել՝ կարամելակաթնային, մրգային, դոնդոլային, դոնդոլամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով /20կգ/, բաժակներ և գդալեր միանգամյա օգտագործման /1500 հատ/, անձեռոցիկ՝ սեղանի 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից /15 տուփ/:
30. Կազմակերպել հյուրասիրություն ռեստորանային համալիրում(100 մարդ):
31. Ապահովել սննդի օբյեկտների առկայությունը:
32. Ապահովել ձայնային ապարատուրա՝ սպասարկող անձնակազմով, դիջեյ:
33. Ապահովել գլխավոր մրցավարի ծառայությունը:
34. Ապահովել ոստիկանության աշխատակիցների ծառայությունը:
35. Ապահովել <<Շտապ օգնության>> ծառայության 1 անձնակազմ /3 ժամ/:
36. Ապահովել հրշեջ փրկարարների ծառայությունը:
37. Ապահովել ճանապարհային ոստիկանության աշխատակիցների ծառայությունը:
38. Ապահովել պարային համույթի /1 խումբ/՝ ֆլեշմոբ անցկացնելու համար, ազգային նվագախմբի /1 խումբ/, մարզատոնահանդեսի հաղորդավարի /1 մարդ/, կրկեսային արտիստների /լարախաղացների/ /1 խումբ/ առկայությունը:
39. Կազմակերպել հրավառություն /20 հատ/:
40. Կատարել տեսա և լուսանկարահանում, պատրաստել տեսանյութ, լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

**<<Լոռվա ձմեռ- 2021>> 50-րդ ավանդական
մարզատոնահանդեսի կազմակերպման**

N	Անվանումը	Քանակը
1.	Ազդագիր /գուն./	100 հատ
2.	Հրավիրատոմս /գուն./	50 հատ

3.	Պատվոգիր /գուն./	60 հատ
4.	Շնորհակալագիր /գուն./	50 հատ
5.	Գավաթ	25 հատ
6.	Հատուկ մրցանակ /բջջային հեռախոս/	2 հատ
7.	Հուշանվեր վետերաններին	10 հատ
8.	Հատուկ մրցանակ ամենափոքր մասնակցի համար /տղա և աղջիկ/ փափուկ խաղալիք	2 հատ
9.	Մանկական փափուկ խաղալիք	20 հատ
10.	Մեծ դրոշների շարան /60x80սմ/	200մ
11.	Փոքր դրոշների շարան	300 մ
12.	Պարան սինթետիկ	300մ
13.	Պարան սինթետիկ ծմետրանոց	10 կապ
14.	Խարույկի փայտ	2 մ ²
15.	Մեխ շինարարական	2.0 կգ
16.	Չողափայտ 80սմ երկար. 5սմ տրամագծով	50 հատ
17.	Մուրճ	2 հատ
18.	Ջահ	1 հատ
19.	Լոզունգ /0.7x 3 մ չափի/ նվիրված մարզատոնահանդեսի 50-ամյակին	3 հատ
20.	Լոզունգ պոլիէթիլենե գունավոր, երկկողմանի տպագրությամբ քաղաքում գովազդելու համար /0.7մx 8 մ չափի/	1 հատ
21.	Լոռվա ձմեռ լոզո /3մx 6 մ չափի/	1 հատ
22.	Պարկ կտորե /0.7x 1.2 մ չափի/	2 հատ
23.	Փուչիկների փունջ <<Լոռվա ձմեռ-50>> գրությամբ օղբարձրացնելու համար	1 փունջ
24.	Մուլտիերոսներ	5մարդ x 3 ժամ
25.	Ավտոաշտարակ (2 օր)	1 հատ
26.	Միկրոբեռնատար	4 երթ x 2օր
27.	Ավտոբուս	10 հատ
28.	Միկրոավտոբուս	20 հատ
29.	Չուն մաքրող մեքենա	2 օր
30.	Չայնային ապարատուրա և սպասարկող անձնակազմ, դիջեյ	1 հատ
31.	Ազգային նվագախումբ	1 խումբ
32.	Մարզատոնահանդեսի հաղորդավարի ծառայություն	1 մարդ
33.	Կրկեսային արտիստ/լարախաղաց/	1 խումբ
34.	Ռաֆթինգ /փչովի սահնակ/	1 հատ
35.	Գովազդի տեղաբաշխում համայնքի տարածքում	5 հատ
36.	Ձնագնաց /բուրան/	2 հատ
37.	Պարային համույթ (ֆլեշմոբ)	1 խումբ
38.	Գլխավոր մրցավարի ծառայություն	1 մարդ
39.	Յուցանակ /1,5մ բարձր. մարզաձևերի անվանմամբ	16հատ
40.	Մուլտիերոսների դեկորացիաներ	3 հատ
41.	Կանգնակ /3մ բարձր. /	2 հատ

42.	Բանվոր	8 մարդ x 3օր
43.	Փուշիկ	100 հատ
44.	Տետր /12 թերթանոց/	20 հատ
45.	Գրիչ	20 հատ
46.	Սոսիս	10 հատ
47.	Սկոչ	20 հատ
48.	Հրավառություն	20 հատ
49.	Վառելանյութ բենզին գեներատորի համար	50 լիտր
50.	Դիզ. վառելիք	20 լիտր
51.	Հեղուկ գազ	15 կգ
52.	Թեյ միանգամյա օգտագործման	35 տուփ
53.	Սուրճ	1.0 կգ
54.	Շաքարավազ	15 կգ
55.	Կոնֆետ /կարամել/	20 կգ
56.	Անձեռոցիկ	15 տուփ
57.	Բաժակներ և գդալներ միանգամյա օգտ.	1500 հատ
58.	Շախմատի կոմպլեկտ	8 հատ
59.	Հյուրասիրություն ռեստորանային համալիրում	100 մարդ
60.	Շտապ օգնության ծառայություն /3 ժամ/	1 անձնակազմ
61.	Տեսանկարահանում և տեսանյութի պատրաստում	

**2021թ. ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր**

1. Տեղեկացնել սեղանի թենիսի քաղաքի առաջնության անցկացման մասին:
2. Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
3. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
4. Ձևավորել մրցավարական կազմ:
5. Առաջնությունն սկսելուց 3 օր առաջ կատարել նախօրոք հայտ ներկայացրած թիմերի վիճակահանություն և բոլոր թիմերին ըստ ենթախմբերի տրամադրել խաղացանկ:
6. Հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (18 հատ), մեդալ՝ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (18 հատ), սպորտային գավաթ (6 հատ):
7. Ձեռք բերել շնորհակալագիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (10 հատ):
8. Ձեռք բերել սեղանի թենիսի գնդակ (50 հատ), անհրաժեշտ դեղորայք, այդ թվում սառեցնող և ցավազրկող:

9. Գլխավոր մրցավարի, 5 մրցավարի, քարտուղարի ծառայություն` (40000 դրամ), բուժքրոջ ծառայություն` (5000 դրամ),):

10. Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնությունը:

**2021թ. Վանաձոր քաղաքի սեղանի թենիսի
առաջնության կազմակերպման**

№	Անվանումը	Քանակը
1	Թենիսի գնդակ	50 հատ
2	Սպորտային գավաթ	6 հատ
3	Շնորհակալագիր /գուն./	10 հատ
4	Պատվոգիր /գուն./	18 հատ
5	Մեդալ	18 հատ
6	Մրցավարական ծառայություն /գլխավոր մրցավար, մրցավարներ, քարտուղար/	
7	Բուժքրոջ վճարման գումար	1 մարդ
8	Դեղորայք	

**2021թ. Վանաձորի հանրակրթական դպրոցների 1-3 և 4-7 դասարանների
<<Սպորտլանդիա-2021>> կազմակերպման**

Ծ Ր Ա Գ Ի Ր

- Տեղեկացնել հանրակրթական դպրոցների տնօրեններին` 1-3 և 4-7 դասարանների սպորտլանդիայի անցկացման մասին:
- Ձևավորել մրցավարական կազմ և ժյուրի:
- Ձեռք բերել պլաստմասե օղակ 20x25 չափի /10 հատ/, մարմնամարզական օղակ 25x30 չափի /10 հատ/, վահանակ 110x65սմ 65սմ բարձրությամբ կանգնակով /2հատ/, վահանակ 2.5մ x40սմ 1մ բարձրությամբ կանգնակով /2հատ/, պարկ 3 մ երկարությամբ 1մ տրամագծով /2 հատ/, բասկետբոլի գնդակ №5 արհեստական կաշվից /2 հատ/:
- Ձեռք բերել կանգնակ /գուրգ 30-50սմ բարձրությամբ /10 հատ/, գնդակ /2 հատ/, փայտյա արգելք` 90սմ բարձրությամբ, 1.2մ երկարությամբ / 2 հատ/:
- Հաղթող և մրցանակակիր թիմերին պարգևատրելու համար ձեռք բերել սպորտային թիթեղյա գավաթ 43սմ, 41սմ և 39սմ բարձրությամբ /6 հատ/ և պատվոգիր` գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /66 հատ/:
- Ձեռք բերել շնորհակալագիր` գունավոր A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /10 հատ/:
- Ձեռք բերել անհրաժեշտ դեղորայք` այդ թվում սառեցնող և ցավազրկող:
- Գլխավոր մրցավարների, մրցավարների, քարտուղարների ծառայություն (90000 դրամ), բուժքույրերի ծառայություն` (10000 դրամ):
- Լրատվական միջոցներով լուսաբանել սպորտլանդիայի ընթացքը և փակման արարողությունը:

**2021թ. Վանաձորի հանրակրթական դպրոցների 1-3 և 4-7 դասարանների
<<Սպորտյանդիա -2021>> կազմակերպման**

№	Սնվանումը	Քանակը
1	Օղակ փոքր 25x30սմ	10 հատ
2	Օղակ մեծ մարմնամարզական	10 հատ
3	Ներքնակ	2 հատ
4	Երկանիվ մանկական հեծանիվ	2 հատ
5	Վահանակ 110x65սմ 65սմ բարձր. կանգնակով/Օլիմպիական/	2 հատ
6	Վահանակ 2.5մx40սմ 1մ բարձր. կանգնակով/Հաղթանակ/	2 հատ
7	Պարկ 3մ երկար. 1մ տրամագծով	2 հատ
8	Բասկետբոլի գնդակ	2 հատ
9	Պատվոգիր /գուն./	66 հատ
10	Շնորհակալագիր /գուն./	10 հատ
11	Գավաթ սպորտային թիթեղյա 1 տեղ գրաված թիմերի համար	2 հատ
12	Գավաթ սպորտային թիթեղյա 2-րդ տեղ գրաված թիմերի համար	2 հատ
13	Գավաթ սպորտային թիթեղյա 3-րդ տեղ գրաված թիմերի համար	2 հատ
14	Փայտյա արգելք /90սմ բարձր. 1մ երկար. /	2 հատ
15	Կանգնակ/ գուրգ/ 30-50սմ բարձր.	10 հատ
16	Շարժական կամրջակ փայտյա 1.1*0.75մ	2 հատ
17	Գնդակ/մեծ/	2 հատ
18	Մրցավարական ծառայություն /զլխավոր մրցավարներ, մրցավարներ, քարտուղարներ?	
19	Բուժքույրի վճարման գումար	2 մարդ
20	Դեղորայք	

2021թ. ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՆՐԱՍՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

- Տեղեկացնել քաղաքի ծանրամարտի առաջնության անցկացման մասին:
- Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
- Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
- Ձևավորել մրցավարական կազմ:
- Ըստ քաշային կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (57 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (57 հատ), հաղթողներին պարգևատրելու համար մարզական արձանիկ (19 հատ):
- Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
- Գլխավոր մրցավարի, մրցավարների, քարտուղարի ծառայություն (40000 դրամ), բուժքույրի ծառայություն՝ (1 մարդ) 5000 դրամ:

8. Ձեռք բերել անհրաժեշտ դեղորայք՝ այդ թվում սառեցնող և ցավազրկող:

9. Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնությունը:

2021թ. Վանաձոր քաղաքի ծանրամարտի (տղաների և աղջիկների) առաջնության կազմակերպման

	<i>Անվանումը</i>	<i>Քանակը</i>
1	<i>Մարզական գավաթ</i>	<i>19 հատ</i>
2	<i>Մեդալ</i>	<i>57 հատ</i>
3	<i>Շնորհակալագիր /գուն./</i>	<i>5 հատ</i>
4	<i>Պատվոգիր /գուն./</i>	<i>57 հատ</i>
5	<i>Դեղորայք</i>	
6	<i>Մրցավարական ծառայություն /գլխավոր մրցավար, մրցավարներ, քարտուղար/</i>	
7	<i>Բուժքույրի վճարման գումար</i>	<i>1 մարդ</i>

2021թ. ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Տեղեկացնել քաղաքի բոնցքամարտի առաջնության անցկացման մասին:
2. Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
3. Ձևավորել մրցավարական կազմ:
4. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
5. Ըստ քաջային կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (68 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (68 հատ), հաղթողներին պարգևատրելու համար սպորտային գավաթներ (17 հատ):
6. Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
7. Գլխավոր մրցավարի, մրցավարների, քարտուղարի ծառայություն (40000 դրամ), բուժքույրի ծառայություն՝ (1 մարդ) 5000 դրամ:
8. Ձեռք բերել անհրաժեշտ դեղորայք՝ այդ թվում սառեցնող և ցավազրկող:
9. Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնության ընթացքը և փակման արարողությունը:

2021թ. Վանաձոր քաղաքի բոնցքամարտի առաջնության կազմակերպման

	<i>Անվանումը</i>	<i>Քանակը</i>
1	<i>Սպորտային գավաթներ ըստ քաջային կարգի հաղթողներին</i>	<i>17 հատ</i>
2	<i>Մեդալ</i>	<i>68 հատ</i>

3	Պատվոգիր /գուն./	68 հատ
4	Շնորհակալագիր /գուն./	5 հատ
5	Դեղորայքի արկղիկ	1 հատ
6	Մրցավարական ծառայություն /զլխավոր մրցավար, մրցավարներ, քարտուղար/	
7	Բուժքույրի վճարման գումար	1 մարդ

2021թ. ՎԱՆԱՉՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶՍԸՄԲԵՍԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Տեղեկացնել քաղաքի ազատ ըմբշամարտի առաջնության անցկացման մասին:
2. Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
3. Ձևավորել մրցավարական կազմ:
4. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
5. Ըստ քաշային կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (40 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (40 հատ), հաղթողներին պարգևատրելու համար սպորտային գավաթ (10 հատ):
6. Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
7. Գլխավոր մրցավարի, մրցավարների, քարտուղարի ծառայություն (45000 դրամ) , բուժքույրի ծառայություն՝ (1 մարդ) 5000 դրամ:
8. Ձեռք բերել անհրաժեշտ դեղորայք՝ այդ թվում սառեցնող և ցավազրկող:
9. Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնության ընթացքը և փակման արարողությունը:

2021թ. Վանաձոր քաղաքի ազատ ըմբշամարտի առաջնության կազմակերպման

	Անվանումը	Քանակը
1	Մարզական գավաթ ըստ քաշային կարգի հաղթողներին	10 հատ
2	Մեդալ	40 հատ
3	Պատվոգիր /գուն./	40 հատ
4	Շնորհակալագիր /գուն./	5 հատ
5	Դեղորայք	
6	Մրցավարական ծառայություն/զլխավոր մրցավար, մրցավարներ, քարտուղար/	
7	Բուժքույրի վճարման գումար	1 մարդ

2021թ. ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԲՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Տեղեկացնել քաղաքի սամբոյի առաջնության անցկացման մասին:
2. Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
3. Ձևավորել մրցավարական կազմ:
4. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
